

ունի կեանքի եւ դործունէութեան, Հալիպը հոծ կեդրոն ունենալով: Հայոց թիւը 85,000, չուրջ 60 դպրոցներով եւ 12,000 աշակերտութեամբ:

Որչափ որ տաք է դադուրին մէջ աղղա-
յին հողին՝ ընկերական կազմակերպու-
թիւններով եւ երիտասարդական շարժում-
ներով, սակայն շատ աղքատ է գրական
շարժումը (3 թերթ միայն) համեմատու-
թեամբ Պէյրութի՝ որ հին օրերու հայկա-
կան Կ. Պոլիսը կը յիշեցնէ:

Եգիպտահայ դադուրի պատկերն ալ
կայ հոն: Շուրջ 30,000 հայ. Գահիրէի եւ
Աղեքսանդրիոյ մէջ իրենց հոծ կեդրոննե-
րը: Մամուլը ոտքի՝ կրկին մեծագոյն օ-
րաթերթերով. չուրջ 13 վարժարաններով
եւ 2500 աշակերտութեամբ:

Կիպրոսի դադուրը 4200 հոգի, Մելիտ-
նեան կրթ. հաստատութեամբ. Իրազը
15,000, զլիսաւորապէս Պաղատաի եւ Պաս-
րայի մէջ, 5 վարժարաններով եւ 2500
աշակերտութեամբ: Յորդանան եւ Իսրա-
յէլ 3500 հոգի, 4 վարժարաններով եւ
800ի չափ աշակերտներով՝ համառօտ ալ-
նարկով Երուսաղէմի Ս. Յակոբեանց:

«Համազգային»ի տարեցոյցը բնական
էր որ ունենար «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» Ընկե-
րութեան մասին ճորի բաժին մը: Ան հիմ-
նուած Գահիրէի մէջ 1928ին Օհանջանեանի
- Շանթի - Եսայեանի - Աղբալեանի -
Իփէկեանի ձեռքով կեդրոնացաւ Պէյրութ՝
հոծ հայութեան ծոցը զեղեցիկ ծրագրով

- Ա) Հայ լեզուի եւ մշակութիւն տարած-
ման.
Բ) Հողայ հայեցի կրթութիւն մեր սե-
րունդին.
Գ) Հասցնել պատրաստուած կրթական ու
հանրային դործիչներ:

Առաջին կարկառուն դործը «Նշան Փա-
լանջեան ձեմարանը» (Պէյրութ), իբր եր-
կորդական վարժարան, մանկապարտէզի
եւ նախակրթարանի բաժիններով:

Փայլուն եղած է իր դործունէութիւնը
հրատարակութիւններով, թատերական
ընտիր նիւթերու բեմադրութեամբ, կրթ-
թական - զեղարուեստական շարժումնե-
րով: Մասնաճիւղերը նոյն ինքն Պէյրութի
մէջ եւ յետոյ Գահիրէ եւ Աղեքսանդրիա:

ԱՆ ՀԵՏԱՅԱՍԾ ԴԻՄՔԵՐ-ու մէջ կ'երե-

ւին Գարեգին Ա. կաթողիկոս Յովսէ-
փեանց, Լ. Շանթ եւ Գ. Իփէկեան:

Կայ հոն ԿԻՍ ԳԻՏԱԿԱՆ բաժին մը,
ընդհանուր հետաքրքրական նիւթերու մէջ
բժշկական-առողջաբանականը:

ԶԱՆԱԶԱՆ ՆԻԻԹԵՐ-ուն մէջ նախ կը
պատկերացուի Հայ մամուլը Մայր Հայ-
րենիքի եւ Սփիւռքի մէջ:

Հայաստանի պարբերականները՝ 40-ի
չափ. իսկ Արտասահմանի՝ 89:

Հայոց թիւը՝ Հայաստան եւ Խորհրդ-
դային երկիրներու մէջ՝ 2,700,000. Թուր-
քիա՝ 120,000, մնացածը 750,000 զանա-
կան երկիրներու մէջ:

Եւ դեռ կան «Հայերը Հարաւային Ամե-
րիկայի մէջ», Պատմական դէպքեր ու թը-
ւականներ: ԵՐԳԻԾԱԿԱՆ բաժին մը «Երե-
ւանի փուռեր»ով (Լեռ Կամսարէն), Պա-
րոնեանէն:

«ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ» զուարթ ու
կրթական բաժինով կ'աւարտի հատորը,
իբրեւ յաւելում ունենալով Տօնացոյց
մը, պատմական դէպքերով, զուարթ եւ
իմաստուն խօսքերով: Եւ ամէնէն վերջ
ցանկը «Համազգային»ի հրատարակու-
թիւններուն:

Կարելի չէր անդրադառնալ հատորին
մէջ ցիրուցան այնքան օգտաւատ մանր -
մունք դոհարներու՝ որոնց կարգին աղղա-
յին աւանդալէպեր, յուշեր, սրամիտ խօս-
քեր, երգիծաբանութիւններ, հանելուկ-
ներ, խաչքառեր են. որոնք հատորը կը
սիրցնեն. կը փակենք դայն մեր հոգիներն
սփոփող զեղեցիկ տողերով (էջ 58), որ-
պէս օտար կարծիք Հայոց մասին:

«Հայերը մեծ եւ ազնիւ կարողութեանց
տէր ժողովուրդ մըն են. անոնք պահեցին
իրենց քաղաքակրթութիւնը դարերու ըն-
թացքին ֆնշման տակ, որ կրնար ճգնել
որ եւ է ուրիշ ժողովուրդ: Հայը երկրա-
գունդիս ազնուական ցեղերէն մէկն է:
Եթէ ինձի հարցութիւն անունները ամենա-
ցանկալի ցեղերուն, որոնք մերգաղթով
կրնային աւելցուիլ ամերիկացի ժողո-
վուրդին վրայ, ամէնէն առաջիններու
կարգին պիտի տայի Հայու անունը»:
(Խնորհու Հուսայթ, Գերմանիոյ ամերի-
կեան զեսպան):

Հ. Ե. Փ.

Հ. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆԻ

(ՓԱՐԵՂ. 1953, ՄԱՐՏ 22, ԱՊՐԷԼ 12)


Մեծարգոյ Հ. Սահակ Վրդ. Տէր Մով-
սէսեանի քահանայութեան ոսկեղէն յորե-
ւեանը մեծ ոգեւորութեամբ տօնուցաւ
անցեալ տարի Ս. Ղազարու մայրավանքին
մէջ (ՏԵՂ. ԲԵՐԺ. 1952, Թ. 7-9, էջ 202-4):

Վենետիկէն վերջ, ահա՛ Փարիզահա-
յութիւնն է որ կու դայ իր յարգանքի,
համակրանքի եւ երախտագիտութեան
տրիտուրն ընծայելու վաստակաւոր Վար-
դապետին, պանծացնելով անոր մէջ մա-
տենադրի եւ դաստիարակի բարձր արժա-
նիքները: Մ. - Ռափ. վարժարաններու
Նախկին Սանուց Միութիւնն է որ կը կաղ-
մակերպէ գրական-զեղարուեստական շը-
քեղ հանդէս մը Մուրատեան վարժարանի
Պէշիկթաշեան-Ալէմշահ թատերասրահին
մէջ, Մարտ 22-ին, ի պատիւ Յորեւան
Հօր գրական եւ դաստիարակչական դոր-
ծունէութեան 50-ամեակին, ինչպէս նաեւ
Աւերի Մուրատեան վարժարանի մէջ պաշ-
տօնավարած տեսչութեան 25-ամեակին:

Պատկառելի բազմութիւն մը, նախկին
սաներ, բարեկամներ, ծանօթներ, համա-
կիրներ, փութացած էին տօնելու իրենց
սիրելի Հ. Սահակին յորեւանը:

Բացման խօսքն արտասանեց վարժա-
րանի Տեսուչը՝ Հ. Մեսրոպ Վ. Ճանա-
րան. հակիրճ, կարուկ եւ ընդհանուր գի-
ծերու մէջ քանդակեց Մեծարգոյ Յորե-
ւանի կեանքը իբր ուսուցիչ, դաստիա-
րակ, պատմագէտ, որու դործունէութեան
զիջաւոր հանդուրաններն են եղած Վենե-
տիկաւոր հանդուրաններն եւ եղած Վենե-
տիկ, Պոլիս, Փարիզ: Յիշամեայ այդ
բեղուն կեանքին մէջ ան նկատեց անմահ
Սերաստացիին Գաղափարականին զեղեց-
կութիւնն ու մեծութիւնը:

«Ու հիմա, ըսաւ յարգելի բանախօսը,
յիսուն տարիներու երկար ընթացքին մէջ,
երբ Յորեւանը կը դարձնէ աչքերը նայե-
լու իր կտրած ուղին, ու դիտելու անոր
երկայնքին վրայ իր ցանած ու շտալօրէն
բաշխած բարիքները մատաղ եւ երիտա-



սարդ սրտերու մէջ, անշուշտ կը հրճուի
հօր մը պէս, կը հրճուի զիտակից դաս-
տիարակի մը պէս, եւ դո՛ւ է որ իր հոգւոյն
կայծերը կեանք տուած են նոր հոգիներու
եւ հրդեհած են սրտեր կրօնքի եւ հայրե-
նիքի սիրով, ու պատրաստած նոր ոյժեր
աղղապահպանման պայքարին համար»:
Ու վերջացուց իր խօսքերը մաղթելով որ
Հ. Սահակ Վ. ի երջանկութիւնը չունենայ
ըլլայ միշտ պայծառ ու շողջողուն:

Ապա բեմ բարձրացաւ Զօրավար Փրե-
ւոյ՝ վարժարանին քաղաքական տեսուչը,
որ յիշելով իր յարաբերութիւնները Յո-

բերեալ չօրհնա, բերաւ իր յարգանքի բաժինը, եւ վերհանեց անոր մէջ քահանայի բարձր կոչման նուիրումը անձի մը արժանիքները՝ երիտասարդներու դաստիարակութեան դործին մէջ, եւ մաղթեց որ երկար տարիներ վայելէ արդիւնքը իր հունձքին: (Ճառը հրատարակուած է «Այսօր»-ի մէջ, 1953, Ապրիլ 5-6):

Մուրատ - Ռաֆ. Նախկին Սանուց Միութեան կողմէ խօսք առաւ Պրն. Օթօն Հէքիմեան, որուն խանդավառ ճառը կը հրատարակենք ստորեւ:

Ի դիմաց ուսուցիչներու՝ հայերէն ճառ մը արտասանեց Պրն. Ֆէյտի, իր անձնական քաղցր յիշատակներէն վերջ՝ ցայտեցրնելով Հ. Սահակ Վ. ի մէջ հոգեբանական դաստիարակը, որ յաջողած է մասնաւորաբար այս յետադարձութեան սերունդին մէջ ներշնչել բարձրագոյն դադարաւորականներ՝ արդարութեան, բարեմտութեան. ու յարատեւօրէն աշխատելով՝ յաջողած է զանոնք մարդ դարձնել եւ հայտնաբերել իւրաքանչիւր ոճով խրատելու եւ դաստիարակելու նաեւ ծնողները: (Ճառը հրատարակուած է Յաւաք-ի մէջ, 1953, Թ. 7028 [2439] Մարտ 28: Ինչպէս նաեւ Այսօր-ի մէջ 1953, Թ. 676-677):

Պրն. Յ. Արրճեան արձագանգն եղաւ դպրոցի աշակերտութեան ծնողներուն եւ ընտանիքներուն դրացիներուն, ու թելադրեց որ Փարիզահայ դպրոցը լաւագոյնս յարգած կ'ըլլայ յիշատակը Մեծ. Յորհեարին, եթէ այսուհետեւ երկու կամ երեք սաներ գոնէ պահէ վրժին մէջ:

Պրն. Պարկերճեան թարգման կանգնեցաւ Մուրատեան վրժին նախկին սաներուն, եւ շնորհակալութիւններ արտայայտեց անհրաժեշտութիւնը բոթակաւարտի, վարժարանը աւելի ճանաչողներու եւ աշակերտութեան թիւը բազմացնելու համար: Ամէնուն կողմէ նուիրեց ինքնահոս ոսկեղէն գրիչ մը:

Այս առթիւ Հ. Սահակ Վ. ի նուիրեցին նաեւ քանի մը թանկարժէք նկարներ. Այսօր-ի վարժարանի «Վենետիկ»-ը՝ Պրն. Արրահամ Ճինճեանի կողմէ, ինչպէս նաեւ Պ. Պուրտուքեանի երկու եւ Պ. Աճէմեանի նկար մը, որոնք բնմի վրայ ցուցադրուեցան բոլոր ծախերու մէջ:

Վարժարանի աշակերտութեան կողմէ յաջող խօսնակ մը դարձաւ Մարտիկեան

Սաչիկ, որ դեղագիր ուղերձ մը ձօնեց Յորհեարին:

Գեղարուեստական բաժինը ճոխացաւ Վարուժան Գոճեանի ջութակի նուագներով եւ Օր. Մառի Կառվարենցի ներդաշնակ մեներգներով:

Վարժարանին աշակերտները արտասանութիւններով եւ երգերով ուրախութիւն եւ միախառնութիւն պատճառեցին սիրելի դաստիարակին:

Վերջին խօսքը առաւ յարգելի Յորհեարը, որուն ի պատիւ ներկաները ոտքի կանգնեցան պահ մը: Հ. Սահակ Վ. նախ խորին շնորհակալութիւն յայտնեց իր եւ ընտանիքի սաներուն եւ Փարիզահայ դպրոցին, տեղական մամուլի ներկայացուցիչներուն՝ որոնք լայն էջեր տրամադրեցին իր յիշատակին, ինչպէս նաեւ բոլոր անոնց որ հեռավորով ու նամակներով ձայնակցեցան այս խանդավառ ցոյցերուն: Ապա դուռնաբաց Միախառնութեան անդամները, որոնց հոյլին մէջ ուղեց նամակներ իր անձն ու դործը: Ծանրացաւ իր դաստիարակի կոչումին վրայ, յայտարարելով որ խանդավառողին սիրած է միշտ հայ մանուկը, որովհետեւ ան հարազատ դուռնաբաց է ասիական եւ արաբացի մեծ ժողովուրդի մը: «Հետեւաբար, բաւ նա, ծառայել այսպիսի ժողովուրդի մը, ինձի համար հաճոյք է եւ պատիւ, եւ եթէ ունենամ ուրիշ տարիներու շարք մը եւս, անվարան պիտի նուիրեմ զայն այդ ժողովուրդի եւ իր դուռնաբացին դաստիարակութեան եւ կրթութեան»:

Ապա արհուրակաւ եւ ազգասէր Սամուէլ Մուրատի եւ Եղեարդ Ռաֆայելի օրինակները թուելով՝ վերաբարձեց սէրը, դուրսդրանքը դպրոցին հանդէպ, զոր ամէն հայ պէտք է ունենայ, ունենոր թէ ազգասիրն. ողեկուեց յիշատակը այն վեհ բարերարներու արդիւնք՝ Պէշիկթաշեաններու, Թերդեաններու, Արիարեաններու եւ Վարուժաններու:

Ընդհանուր ողբերգութեան մէջ փակուեցաւ հանդէսը:

* * *

Յարգանքի երկրորդ ցոյցը տեղի ունեցաւ Ապրիլ 12-ին, դարձեալ Սեւրի Մուրատեան վրժին մէջ: Մօտ 150 հոգի, զաւուր թիւն ամէն խաւերէն եւ վարժարանին բարեկամներէն փութացած էին ներկայ

ըլլալ ճաշասեղանին, որու կազմակերպողներուն մէջ յիշատակութեան արժանի են անունները Ճինճեան եղբայրներու, եւ Պրն. Գեղամ Աճէմեանի՝ իր ստանձնած դործօն դերին համար:

Պատուոյ սեղանին կը նախադասէր Տ. Սերովբէ Ծ. Վ. Մանուկեան՝ Կաթ. պատուիրակ Եւրոպայի Հայոց Կարգացուցան խորհրդի համակարգիչ նամակներէն եւ հեռագիրներէն գլխաւորները, զրուած Հ. Բ. Ր. Մ. Կեղր. Վարչութեանէն եւ Փարիզի մասնաճիւղէն, Հայ Գրողներու Ընկերակցութեանէն, Վ. Մալեգեանէ, Հ. Ներսէս Ակինեանէ եւս...:

Ճաշասեղանի վրայ խօսք առաւ նախ Տոքթ. Ճինճեան. ապա Հ. Մեսրոպ Վ. Ճանաչեան: Մամուլի ներկայացուցիչներէն Պրն. Յ. Պողոսեան Այսօր-ի, Պրն. Յ. Եղիարեան Յաւաք-ի, Պրն. Նուսրար Յովհաննէսեան Արաբ-ի կողմէ դուռնաբացին վաստակաւոր Յորհեարը:

Յաջորդաբար խօսք առին Տիկին Էլլէն Բիւրանդ, յանուն Կապոյտ Սաչի, Պրն. Օննիկ Թաղէոսեան՝ Բարեկրթականի կողմէ, Պրն. Մ. Պարսաբեան՝ Համադպրոցի կողմէ, Բժ. Տամբեան՝ Գարնադպրոցի կողմէ, Բժ. Տամբեան՝ Մելիք, ցասէրի կողմէ. ապա նաեւ Տոքթ. Մելիք, Ա. Զրաքեան, Տ. Զիթունի, Տօնիկեան, Հայի Սրուանճեան, Մաւեան, Տէօքմէ-ճեան, Յ. Արրճեան եւ Տոքթ. Ա. Տէր Անդրէասեան:

Վերջին խօսողներն եղան Տ. Սերովբէ Ծ. Վ. Մանուկեան եւ հուսկ Հ. Սահակ Վրդ., որ շնորհակալութեան խօսքներուն հետ խառնեց նաեւ դաստիարակի թելադրութիւններ:

Գեղարուեստական բաժնին մէջ պահաս չեղան երգեր եւ նուագներ:

Ճաշահանդէսը փակեց «Հայր մեր»-ը, զոր ներկաները յոտնկայս երգեցին:

Պ. ՕԹՈՆ ՀԵՔԻՄԵԱՆԻ ՃԱՌԸ
Խօսած 22 Մարտի հանդէպին

Յարգելի հանդիսականներ,

Հարկաւարաբար, պատիւս արժանաւորաց... Փարիզի եւ շրջակայ արուարձաններու համայնքի մեծամասնութեան, մանաւանդ վարժարանիս աշակերտաց ծնողներու, խնամակալներու եւ բազմաթիւ բարեկամներու բաղձանքին զօհանքով, Մուրատ-Ռաֆայելեանի Նախկին Աշակերտաց Միութիւնը իրեն պարտականութիւն

համարեց նախաձեռնարկն ըլլալ առ ի մեծարանք Մեծարդոյ Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեանի, սարքելու այս յորելինական հանդէսը:

Անցեալ տարի 17 Օգոստոսին, Վենետիկ՝ Ս. Ղազարու Միութեան Միարանութեան Մայր վանքին մէջ, պարտ ու պատճառ հանդիսաւորութեամբ կատարուած է Հ. Սահակ Վ. ի յիշմամբ քահանայութեան յորելինական հանդէսը, որուն արձագանգը լսելով Սփիւքի հայ թերթերէն՝ Հ. Սահակ Վ. ի ծանօթ եւ բարեկամ բոլոր հայերու սրտերը հրճուեցան:

Հոն՝ Վենետիկ՝ իր պատկանած վանքին մէջ տօնուեցաւ յիշմամբ քահանայութեան յորելինական մեծ հայ աշխարհահայ լուսաւոր ստանին մէջ կը տօնենք, համահայկական գեանի վրայ, անոր յիշմամբ դաստիարակչական եւ դրական դործունէութիւնը, ինչպէս նաեւ վարժարանիս տեսչութեան քանակական յորելինական, որովհետեւ Հ. Սահակ՝ քահանայ մը ըլլալէ դատ, է նաեւ ժողովրդական հանրաժանութ, սիրուած, յարգուած դէմք մը:

Ան՝ իր քահանայութեան սկզբի օրերուն իսկ նուիրուեցաւ դաստիարակչական ապարդիւն. նախ 1902 Օգոստոսին մինչեւ 3 Յունիս 1903 վանքին մէջ նորընծաներու դասաւանդութեամբ. ապա փոխադրուեցաւ Պոլիս, ուր նշանակուեցաւ ուսումնապետ Գառը-Գիւղի Միութեան վարժարանին եւ հոն մնաց մինչեւ 1911 Նոյեմբերի վերջը, վաւերով միեւնոյն ատեն ուսուցչի պաշտօն:

Իր աշակերտներուն կ'ուսուցանէր զլիաւորաբար Հայոց պատմութիւն, Հայ աշխարհագրութիւն եւ Հայ մատենագրութիւն:

Բռնակալութեան օրերուն կը զուգահեռէր ատիկա, երբ Հայոց պատմութիւն ուսուցանել, Հայաստան բաժն արտասանել կամ գրել, կը նկատուէր դաւաճանութիւն, քրեական յանցանք:

Այսու հանգեւ, Հ. Սահակ Վ. խոհեմութեամբ կ'աւանդէր իր դասերը, զորս իր աշակերտները մեծ խանդով եւ հետաքրքրութեամբ կը սորվէին. այսպէսով Հ. Սահակ անոնց մանուկ սրտերուն մէջ կը փռէր հայրենասիրական զգացումի անչէլ ջահեր:

1908 Յունիս ամսուան մէջ երբ Օսմանեան Սահմանադրութիւնը հռչակուեցաւ եւ հայերը կարճեցին դատը ըլլալ իրենց կատարեալ ազատութիւնը, այն խանդավառ օրերուն Հ. Սահակ եղաւ յայտնութիւն մը Պոլսոյ հայութեան իր առաջին մէկ հայրենաշունչ ճանախօսութիւնովը, զոր բաժն է Երեւանի ազգային դերեզմանատան մէջ, հոն բազմութեան մը ներկայութեան, հանդուսեալ լանատեղծներու՝ Միւրաթի Պէշիկթաշեանի

եւ Սրապիոն Հէքիմեանի յարակից դամբաններուն վրայ:

Այն յիշատակելի օրէն քիչ յետոյ՝ Հ. Սահակ, իր երիտասարդ տարիքին լիաքուէ կ'ընտրուի Պոլսոյ Հայ Կաթողիկէ համայնքի Երեսփոխանական Ժողովի անդամ:

1912ի ընթացքին, Հ. Սահակ կ'անցնի Պելճիքա, հետեւելու Լուվէնի համալսարանին մէջ ընկերաբանական եւ պատմական դիտութեանց ու մանկավարժութեան, ուր երկու տարի մնալէ ետք, 1914-ի համաշխարհային պատերազմին կ'անցնի Զուիցերլանդ, միեւնոյն ուսումները շարունակելու հոն տարի մը մնալէ յետոյ կը վերադառնայ Վենետիկ ու այնտեղ՝ 1916-էն մինչեւ 1918, անդիւհատ կը վարէ Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ ուսումնապետի եւ մատակարարի պաշտօն, ուսուցանելով միաժամանակ Հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն եւ այլ հայկական ուսումներ:

Հուսկ յետոյ, 1928-29 դպրոցական տարեւորջանին, Սէն դեաի այս ափունքին վրայ վերածաղկող Սեւրի Մուրատեան վարժարանին տեսուչ, ու այդ տիտղոսով կը մնայ քսան եւ հինգ տարիներ ապա Վերջին քառորդ դարն ալ կ'ըլլայ իր ուսումնական կեանքին արծաթեայ յորելեանը, որ հրաշալիօրէն կը զուգադիպի իր քահանայութեան եւ դաստիարակչական գործունէութեան ոսկեղէն յիսնամեայ յորելեանին:

Ուսուցչական այս բեղնաւոր գործունէութենէն զատ, Հ. Սահակ կը ներկայանայ նաեւ իրրեւ պատմագիր, դրաղէտ եւ հեղինակ դանազան դրական երկերու:

1914-ին հրատարակած է դպրոցական աշակերտներու համար Համառօտ Հայոց պատմութիւն, որ մեծ ժողովրդականութիւն ստանալով շուտով ըստպատմ է:

1922-ին՝ ալ աւելի ընդարձակ՝ երկու հատոր Հայոց պատմութիւն մը եւս լոյս ընծայած է լիկէտներու համար, որ նմանապէս խանդավառ ընդունելութիւն գտած է ազգային վարժարաններու մէջ, եւ շուտով արժանացած իր Բ. տպագրութեան,

Հակառակ իր ուսուցչական բազմադրադ վիճակին՝ Հ. Սահակ տակաւին հրատարակած է ուրիշ շահեկան ուսումնասիրութիւններ. ինչպէս Սաքըզ Թովհանէս փաշայի կենսագրականը, Մուրատ - Ռափայէլեան վարժարանի համառօտ պատմութիւնը եւ դանազան հասարակութեան թարգմանութիւններ:

Հ. Սահակ է նաեւ թատերագիր. իր «Աւարայրի Դիւցազունը» ողբերգութիւնը զուլ-գործոց մըն

է, որ հրատարակուեցաւ երկու տարի առաջ եւ վարժարանիս աշակերտներուն կողմէ մեծ յաջողութեամբ ներկայացուեցաւ այս թատերասրահին մէջ: Ունի ուրիշ թատերգութիւն մըն ալ, «Արշակ Բ. Արքայ», հինգ արարուածով, այնքան յաջող որքան առաջինը, որ կը մնայ անտիպ:

Հ. Սահակ Վ. Ժանօթ է նաեւ Փարիզի հայոց մեծամասնութեան որպէս ճարտասան հրապարակախօս: Ան է նաեւ դիւանագէտ. դիտէ իր խօսքին արժէքն ու տարողութիւնը: Իր ազդասիրութիւնը այնքան զօրաւոր է իր մէջ՝ որքան կրօնասիրութիւնը: Մոլեռանդ մը չէ, եւ ո'չ ալ ազգայնամոլ: Երբ մարդասիրական պարտականութեան մը առջեւ դանուի, օտարազգի մըն ալ կրնայ նոյնքան իր հոգածութեան առարկան ըլլալ, որքան իր հարազատ մէկ արեւակիցը:

Ան ունի կարեկից հոգի. իր աշակերտները զինք կը կոչեն պարզապէս «Հայր Սահակ». այդ «Հայր» անուանումը կրօնաւորի հանգամանքէն զատ՝ ունի նաեւ «Հայր» բառին տառական իմաստը, պարզապէս անոր համար որ ան միշտ վերաբերուած է իր աշակերտներուն հանդէպ հայրական անկեղծ դուրսդուրանքով:

Բնական է որ երկար պիտի ըլլար Հ. Սահակ Վ.ի քահանայ ձեռնադրուելէն ի վեր, յիսուն տարիներու շրջանին, իր ազդողուտ գործունէութիւնն ու գործերը մանրամասնօրէն պարզել կամ պատմել այստեղ. այսու հանդերձ ակնյայտի եւ անվիճելի ճշմարտութիւն մըն է որ վերջին կէս դարու ընթացքին, որպէս դաստիարակ ան հաւատարմօրէն հետեւած է հայեցի ուսուցման համար, այն ուղղութեան, զոր Սեւրատացի Մեծն Մխիթար Արքայի ազդանուէր յաջորդները անձնուիրաբար ընդգրկած են երկար տարիներէ ի վեր իրենց վարած բոլոր վարժարաններուն մէջ. Բատովա, Վենետիկ, Փարիզ, Կ. Պոլիս (Բերա եւ Գատը-Գիւղ), Տրապիզոն, Պարտիզակ, Աղեքսանդրիա, Հալէպ, եւ հասցուցած են աշակերտներ, որոնք հետագային եղած են ընտիր հայ անհատներ՝ ըլլալ՝ գործնական ասպարէզի, ըլլալ՝ մտաւորական եւ ընկերական բարձր շրջանակներու մէջ:

Երախտագիտական յարգանքի բարոյական տուրք մըն է իմ այս խօսքերս արտասանուած յանուն Մուրատ-Ռափայէլեան Նախկին Աշակերտաց Միութեան. ասով կը կարծեմ թարգմանն եղած ըլլալ նաեւ բոլոր անոնց, որ անկեղծօրէն սիրած են Հ. Սահակ Վ.ը. սրտանց եւ քերթօրէն կը մաղթեմ արեւշատութիւն մեր սիրելի Հ. Սահակին, որպէսզի երկար եւ բարեբաւտիկ տարիներու ընթացքին՝ կարելի ըլլայ նաեւ տօնել իր ազամանդեայ յորելեանը:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽԱՉԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

«Բազմավեպ»ի ընթերցողներուն ծանօթ է թէ 1952-ի Մայիս ամիսէն սկսած են լոյս տեսնել Ս. Ղազարու մամուլէն Հայկական շարականները եւրոպական խաղաղութեամբ:

Հոյակապ եւ անդին գործ՝ որ քառասուն տարիներու խղճամիտ ու յարատեւ աշխատութիւն արժած է վաստակաւոր Հ. Ղեւոնդ Վ. Տայեանին, եւ որուն հանդէպ երախտագրաւ պիտի մնայ յաւերժօրէն ամբողջ Հայ ազգը:

Հարկ չկայ բացատրել թէ այդ նախախնամական ձեռնարկէն որքան մեծ բարիքներ առաջ կու գան: Նախ աղաւաղման - եւ կամ ինչ որ աւելի աղետալի պիտի ըլլար եւ անդամանելի - ի սպառ կորստեան վտանգէն կը փրկուին մեր եկեղեցւոյ եւ միեւնոյն միջոց հայ ազգի զեղարուեստական այդ թանկագին դանձերը՝ հայկական շարականներու բոլոր եղանակները իրենց զանազան տեսակներով, որոնք մեր հնազանդ դարերէն հասած միներով, որոնք մեր հնազանդ դարերէն հասած են Ս. չեւ Մխիթար եւ անոր ձեռքով բերուած են Ս. Ղազար եւ երկուքուկէս դարու շրջանին շարունակ հոն երգուած ու պահուած անաղարտ, խղճամտութեամբ եւ մեծ նախանձախնդրութեամբ, իրենց զուտ հայկական շնորհալի նկարագրով, առանց թրքական կամ օտար երգերու ազդեցութիւններու:

Գործնականին մէջ եւրոպական այս խաղաղութեամբ նախ պիտի տարածէ եւ ընդհանրացնէ Ս. Ղազարու մէջ պահուած աւանդութիւնը որ ազգային ամէնէն հին, հարազատ եւ մաքուր ձեւը կը ներկայացնէ շարականներու, որովհետեւ Մխիթար Արքայաճայ՝ իր սուր յիշողութեամբ սորված է զանոնք մեր բնազաւտի հին ու պատմական վանքերուն մէջ՝ այսինքն իջմիածնի, Բասնի,

Սերաստիոյ եւ այլ հայ վանքերէ եւ այնպէս աւանդած իր յաջորդութեան, եւ այսպէս սերունդէ սերունդ մինչեւ մեր օրերը:

Ան միանգամայն դիւրութիւն պիտի տայ միեւնոյն միջոց որ ամէնքը եւ ամէն տեղ, եւրոպական երաժշտութեան համեստ ծանօթութեամբ, յաջողին կարդալ եւ մեկնել հայ խաղերու խորհրդաւոր լեզուն ու անոնց արժէքները:

Ազգայինէն անդին միջազգային տեսակէտն ալ կայ, քանի որ այս ձեւով ամբողջ աշխարհի առջեւ կը բացուի հայկական սրբազան երաժշտութեան դանձարանը, որ տոթի կ'ընծայէ օտարներուն ոչ միայն դնահատելու մեր ցեղային արժէքը այդ ճիւղին մէջ ալ, այլ նաեւ երաժշտական նոր հորիզոններ կը բանայ կատարելու նոր ուսումնասիրութիւններ եւ նոր գործեր՝ այս նոր աղբիւրին կամ հում նիւթին ներշնչումներով:

Ստորեւ կու տանք առաջին արձագանքները հայ եւ օտար անձերու, ինչպէս նաեւ իտալական ձայնասփիւտին կրկին հաղորդաղբութեան:

«Բազմավեպ»ի խմբագրութիւնը անխառն հրճուանքով եւ խանդավառ ծափահարութեամբ կ'ողջունէ ժրաջան վաստակաւոր Հ. Ղեւոնդ Վ.ի մեծ եւ յաւերժական յիշատակի արժանի հայ երաժշտական կոթողը, եւ թարգման կը հանդիսանայ Մխիթարեան Միաբանութեանս եւ համօրէն ազգին խորին երախտագիտութեան եւ անվերապահ դնահատութեան հանդէպ իրեն, մաղթելով սրտադին որ վաղընդփոյթ աւարտի տպագրական մեծածախս եւ համբերատար գործը, եւ մեզի հետ համօրէն աշխարհ վայելէ հայ երգը՝ ի պարծանս Ազգին եւ Եկեղեցւոյ: